ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՌՕՐՅԱ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-25/25-5

15.04. 2025թ.

ք. Երևան

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ա. Եսայանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Պատվիրատու»), մի կողմից, և «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ը, ի դեմս ռեկտոր Խ. Ղազեյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ ֆինանսների նախարարության քաղաքացիական ծառայողների մասնագիտական վերապատրաստման եռօրյա դասընթացների կազմակերպման ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 264,000 (երկու հարյուր վաթսունչորս հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 29-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրինչհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմականևարտակարգդրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսիցավելի,ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապանի կողմից գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման

ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ պետական կառավարման ակադեմիա ՊՈԱԿ
ք. Երևան, Մ. Ադամյան 1	ք. Երևան, Կիևյան-8
ՀՎՀՀ՝ 02629081	ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011018539	Հ/Հ՝ 900018005646
ՖՆ գործառնական վարչություն	ՀՎՀՀ 00035088
ՖՆ գլխավոր քարտուղարի	Ռեկտոր
պարտականությունները կատարող	
---------- Ա. Եսայան	---------- Խ. Ղազեյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ.

Հավելված N 1
15.04. 2025թ. կնքված
ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-25/25-5 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը
6	79631200/9	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման ծառայություններ՝ **1.Վերապատրաստման դասընթացի կազմակերպումն առկա՝** աշխատանքային օրերին, ընդհանուր 24 ակադեմիական ժամ տևողությամբ՝ ապահովելով վերապատրաստման դասընթացների անցկացումը վերապատրաստման մասնակիցներին մատչելի/հասանելի միջոցների կիրառմամբ: **2.Վերապատրաստում իրականացնող մասնագետը պետք է համապատասխանի հետևյալ հիմնական չափանիշներին՝** 1) կրթական և (կամ) խորհրդատվական ծառայություններ մատուցելու առնվազն երեք տարվա աշխատանքային փորձ, կամ՝ 2) հանրային ծառայության ոլորտում կրթական ծրագրեր և (կամ) խորհրդատվական աշխատանքներ իրականացնելու առնվազն երկու տարվա փորձ, կամ՝ 3) համապատասխան վերապատրաստման	դրամ	72,000	1	ՀՀ, ք.Երևան	Ծառայությունների մատուցումն իրականացվում է պայմանագիրը կնքելուց հետո՝ 2025 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում (բացառությամբ երբ Կատարողը համաձայնվում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետներում) մինչև 2025 թվականի դեկտեմբերի 20-ը:

		ծրագրով նախատեսված թեմայով կրթական ծրագրեր և (կամ) խորհրդատվական աշխատանքներ իրականացնելու և (կամ) միջազգային ծրագրերին մասնակցության առնվազն մեկ տարվա փորձ, 4) համապատասխան վերապատրաստման ծրագրով նախատեսված թեմային առնչվող ոլորտում առնվազն երկու տարվա աշխատանքային փորձառություն: Յուրաքանչյուր խմբի վերապատրաստումը սկսելուց առնվազն 20 օր առաջ պատվիրատուին պետք է տեղեկացնի վերապատրաստման ժամկետների մասին: **3.Պատվիրատուն** պետք է ապահովի սահմանված թվով քաղաքացիական ծառայողների մասնակցությունը վերապատրաստման գործընթացին: Վերապատրաստման յուրաքանչյուր փուլի ավարտին մասնակիցների կողմից ծրագրերի յուրացման մակարդակի ստուգման նպատակով պետք է անցկացվի թեստավորում: Թեստերը կազմվելու են վերապատրաստողի կողմից և պետք է բաղկացած լինեն առնվազն 20 առաջադրանքից: Թեստավորման արդյունքները /ըստ տոկոսի/ պետք է տրամադրվեն պատվիրատուին: ***<u>Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ</u>*** **Աշխատանքային օրենսդրություն.** 1) Աշխատաժամանակը և հանգստի ժամանակը: Աշխատավարձ և սոցիալական երաշխիքներ					

		(երաշխիքներ և հատուցումներ): 2) Աշխատանքային օրենսդրությունը և դրանով կարգավորվող հարաբերությունները: 3) Անհատական աշխատանքային հարաբերություններ: Աշխատանքային պայմանագիրը, տեսակները: Աշխատանքային պայմանագրի լուծումը և լուծման մասին ծանուցումը: Աշխատողի հետ վերջնահաշվարկի կարգը: 4) Աշխատանքային կարգապահությունը: Վնասի հատուցում և նյութական պատասխանատվություն: 5) Աշխատողների անվտանգությունը և առողջությունը: 6) Աշխատանքային իրավունքների իրականացումը և պաշտպանությունը: 7) Աշխատողների անձնական տվյալների պաշտպանությունը: 8) Թեստավորման ընթացակարգի ներկայացում, ծրագրի ամփոփում, թեստավորում: Վերապատրաստման ենթակա քաղաքացիական ծառայողների թվաքանակը՝ 6:					
7	79631200/12	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման ծառայություններ՝ **1.Վերապատրաստման դասընթացի կազմակերպումն առկա՝** աշխատանքային օրերին, ընդհանուր 24 ակադեմիական ժամ տևողությամբ՝ ապահովելով վերապատրաստման դասընթացների անցկացումը վերապատրաստման մասնակիցներին մատչելի/հասանելի միջոցների կիրառմամբ:	դրամ	36,000	**1**	ՀՀ, ք.Երևան	Ծառայությունների մատուցումն իրականացվում է պայմանգիրը կնքելուց հետո՝ 2025 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում (բացառությամբ երբ Կատարողը համաձայնվում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետներում) մինչև 2025 թվականի դեկտեմբերի 20-ը:

		2.Վերապատրաստում իրականացնող մասնագետը պետք է համապատասխանի հետևյալ հիմնական չափանիշներին՝ 1) կրթական և (կամ) խորհրդատվական ծառայություններ մատուցելու առնվազն երեք տարվա աշխատանքային փորձ, կամ՝ 2) հանրային ծառայության ոլորտում կրթական ծրագրեր և (կամ) խորհրդատվական աշխատանքներ իրականացնելու առնվազն երկու տարվա փորձ, կամ՝ 3) համապատասխան վերապատրաստման ծրագրով նախատեսված թեմայով կրթական ծրագրեր և (կամ) խորհրդատվական աշխատանքներ իրականացնելու և (կամ) միջազգային ծրագրերին մասնակցության առնվազն մեկ տարվա փորձ, 4) համապատասխան վերապատրաստման ծրագրով նախատեսված թեմային առնչվող ոլորտում առնվազն երկու տարվա աշխատանքային փորձառություն: Յուրաքանչյուր խմբի վերապատրաստումը սկսելուց առնվազն 20 օր առաջ պատվիրատուին պետք է տեղեկացնի վերապատրաստման ժամկետների մասին: **3.Պատվիրատուն** պետք է ապահովի սահմանված թվով քաղաքացիական ծառայողների մասնակցությունը վերապատրաստման գործընթացին: Վերապատրաստման յուրաքանչյուր փուլի ավարտին մասնակիցների կողմից ծրագրերի յուրացման մակարդակի ստուգման նպատակով պետք է անցկացվի թեստավորում: Թեստերը կազմվելու են վերապատրաստողի կողմից և պետք է բաղկացած լինեն					

		առնվազն 20 առաջադրանքից: Թեստավորման արդյունքները /ըստ տոկոսի/ պետք է տրամադրվեն պատվիրատուին: ***<u>Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ</u>*** **Սոցիալական պաշտպանության համակարգ.** 1) Սոցիալական պաշտպանության համակարգը, դերակատարները, գործառույթների բաշխումը դերակատարների միջև: 2) Սոցիալական ծառայություններ. խոցելի խմբեր, նրանց տրամադրվող ծառայությունների առանձնահատկությունները, իրավական դաշտը: 3) Սոցիալական աջակցությունը ՀՀ-ում: 4) ՀՀ կենսաթոշակային համակարգը: 5) Դեպքի վարումը և դեպքի կառավարումը սոցիալական ծառայություններում: 6) Թեստավորման ընթացակարգի ներկայացում, ծրագրի ամփոփում, թեստավորում: Վերապատրաստման ենթակա քաղաքացիական ծառայողների թվաքանակը՝ 3:					
8	80311100/1	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման ծառայություններ՝ **1.Վերապատրաստման դասընթացի կազմակերպումն առկա՝** աշխատանքային օրերին, ընդհանուր 24 ակադեմիական ժամ տևողությամբ՝ ապահովելով վերապատրաստման դասընթացների անցկացումը վերապատրաստման մասնակիցներին	դրամ	156,000	1	ՀՀ, ք.Երևան	Ծառայությունների մատուցումն իրականացվում է պայմանագիրը կնքելուց հետո՝ 2025 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում (բացառությամբ երբ Կատարողը համաձայնվում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետներում) մինչև 2025 թվականի դեկտեմբերի 20-ը:

		մատչելի/հասանելի միջոցների կիրառմամբ: **2.Վերապատրաստում իրականացնող մասնագետը պետք է համապատասխանի հետևյալ հիմնական չափանիշներին՝** 1) կրթական և (կամ) խորհրդատվական ծառայություններ մատուցելու առնվազն երեք տարվա աշխատանքային փորձ, կամ՝ 2) հանրային ծառայության ոլորտում կրթական ծրագրեր և (կամ) խորհրդատվական աշխատանքներ իրականացնելու առնվազն երկու տարվա փորձ, կամ՝ 3) համապատասխան վերապատրաստման ծրագրով նախատեսված թեմայով կրթական ծրագրեր և (կամ) խորհրդատվական աշխատանքներ իրականացնելու և (կամ) միջազգային ծրագրերին մասնակցության առնվազն մեկ տարվա փորձ, 4) համապատասխան վերապատրաստման ծրագրով նախատեսված թեմային առնչվող ոլորտում առնվազն երկու տարվա աշխատանքային փորձառություն: Յուրաքանչյուր խմբի վերապատրաստումը սկսելուց առնվազն 20 օր առաջ պատվիրատուին պետք է տեղեկացնի վերապատրաստման ժամկետների մասին: **3.Պատվիրատուն** պետք է ապահովի սահմանված թվով քաղաքացիական ծառայողների մասնակցությունը վերապատրաստման գործընթացին: Վերապատրաստման յուրաքանչյուր փուլի ավարտին մասնակիցների կողմից ծրագրերի յուրացման մակարդակի ստուգման նպատակով պետք է անցկացվի թեստավորում: Թեստերը կազմվելու են					

		վերապատրաստողի կողմից և պետք է բաղկացած լինեն առնվազն 20 առաջադրանքից: Թեստավորման արդյունքները /ըստ տոկոսի/ պետք է տրամադրվեն պատվիրատուին: ***<u>Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ</u>*** **Վիճակագրական տվյալների մշակում և վարում մայքրոսոֆթ էքսել ծրագրով.** 1) Աշխատանք աղյուսակի բջիջների հետ, բջիջների ավելացում, ջնջում, հասցեավորում: (COMMANDS-Clipboard, Font, Alignment, Number, Conditional Formating, Cels, Editing): Ամփոփ աղյուսակի ստեղծում: Տարբեր աղյուսակների համախմբում: 2) Էլեկտրոնային աղյուսակի միջավայրը: 3) Ֆայլի մեջ նկարների, տարատեսակ պատկերների ներմուծում: Գծապատկերների կառուցում: Սիմվոլների ներմուծում: 4) Աշխատանքային թերթի պարամետրերի սահմանումը, փաստաթղթի տպագրումը, կրկնվող տողեր կամ սյուներ (COMMANDS-Page Setup): Սորտավորում և ֆիլտրացիա: Մեկնաբանությունների կառավարում: Պատրաստի ֆայլի դիտման տեսակները: 5) Աղյուսակների տվյալների համախմբում, միջանկյալ տվյալների ստացում (COMMANDS-Sort Filter, Text to Columns, Remove Dublicates, Consolidate, Group, Ungroup, Subtotal): 6) Ֆունկցիաների ներմուծում՝ Վիճակագրական, տրամաբանական, տեքստային (COMMANDS-Insert Function, Name Manager, Formula Auditing, Calculation): Մի քանի					

		պատուհանների դասավորումը էկրանի վրա: Տողի կամ սյան սառեցումը: 7) Տվյալների տեղափոխում, պատճենահանում, աղյուսակային տվյալների ֆորմատավորում, տեղեկատվության հավասարեցում, տեղեկատվության տիպի որոշում: Բանաձևերի գրառում (COMMANDS-Pivot Table, Pictures, Shapes, Charts, Text, Symbol, Equation): Բանաձևերի կազմում: 8) Ֆայլի կամ էջի պաշտպանություն ծածկագրերի օգնությամբ (COMMANDS-Workbook Statistics, Comments, Protect Sheet, Protect Workbook): Աշխատանքային միջավայրի բաժանումը: (COMMANDS-Workbook Views, Zoom, Window): 9) Թեստավորման ընթացակարգի ներկայացում, ծրագրի ամփոփում, թեստավորում: Վերապատրաստման ենթակա քաղաքացիական ծառայողների թվաքանակը՝ 13:					

** Հաղթող մասնագետը պետք է համապատասխանի ՀՀ առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարգը, վերապատրաստում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող հիմնական չափանիշները, կրեդիտների սահմանման հիմնական սկզբունքները, կարիքները գնահատելու և անհատական ծրագիր կազմելու, ինչպես նաև համապատասխան մարմնի վերապատրաստման ծրագիրը կազմելու միջազգային հավաստագրերի ճանաչելիության սկզբունքները, տեսակները սահմանելու մասին» N 2-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ գլխի չափանիշներին:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ 900011018539
ՖՆ գործառնական վարչություն
ՖՆ գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող

----------Ա. Եսայան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

ՀՀ պետական կառավարման ակադեմիա ՊՈԱԿ
ք. Երևան, Կիևյան-8
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900018005646
ՀՎՀՀ 00035088
Ռեկտոր

---------- Խ. Ղազեյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 2
15.04. 2025թ. կնքված
ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-25/25-5 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումներիպլանում նախատեսվածմիջանցիկծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
6	79631200/9	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ				72,000	72,000	72,000	72,000	72,000	72,000	72,000	72,000	72,000	72,000
7	79631200/12	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ				36,000	36,000	36,000	36,000	36,000	36,000	36,000	36,000	36,000	36,000
8	80311100/1	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ				156,000	156,000	156,000	156,000	156,000	156,000	156,000	156,000	156,000	156,000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ 900011018539
ՖՆ գործառնական վարչություն
ՖՆ գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող

_____Ա. Եսայան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

ՀՀ պետական կառավարման ակադեմիա ՊՈԱԿ
ք. Երևան, Կիևյան-8
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900018005646
ՀՎՀՀ 00035088
Ռեկտոր

_____Խ. Ղազեյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 3
15.04. 2025թ. կնքված
ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-25/25-5 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
Գտնվելու վայրը _____	Գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« »« » 20թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ ---------- 20թ. Դուրս գրված N ---------- հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարում է հետևյալ ապրանքները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
15.04. 2025թ. կնքված
ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-25/25-5 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է,որ_____-ի(այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն